



Թարմացվել է՝ 9/30/21: Հաճախակի Տրվող Հարցերի (ՀՏՀ) այս փաստաթուղթը տրամադրում է տեղեկություններ COVID-19-ի դեմ երեք պատվաստանյութերի մասին, որոնք հասանելի են Միացյալ Նահանգներում: Այդ պատվաստանյութերը պատրաստված են Moderna-ի, Pfizer-ի և Janssen/Johnson & Johnson-ի (J&J) կողմից:

Ինչո՞ւ է կարևոր պատվաստվելը

COVID-19-ի դեմ պատվաստումը կարևոր է, քանի որ դա COVID-19-ի կանխարգելման լավագույն տարբերակն է: Պատվաստանյութերը արտակարգ լավ են կանխում մարդկանց COVID-19-ով վարակվելը, ինչպես նաև COVID-19-ի հետևանքով հիվանդանոցում հայտնվելը կամ մահանալը: Պատվաստանյութերը նվազեցնում են նաև COVID-19-ի հետևանքով խրոնիկական հիվանդությունն ձեռք բերելու, ինչպես նաև աշխատանքից և դպրոցից բացակայելու վտանգը:

Պատվաստվելով՝ մենք ոչ միայն պաշտպանում ենք ինքներս մեզ, այլև մեր ընտանիքին, ընկերներին և հարևաններին: Սա ներառում է մինչև 12 տարեկան երեխաներին, որոնք դեռ չեն կարող պատվաստվել, ինչպես նաև շատ թույլ իմունային համակարգ ունեցող մարդկանց, որոնք համար պատվաստանյութը ավելի քիչ արդյունավետ է:

Որքան շատ մարդիկ պատվաստվեն, այնքան քիչ կլինի COVID-19-ի տարածման կամ վիրուսի նոր ենթատեսակների առաջացման հավանականությունը: Նույնիսկ այն մարդիկ, որոնք վարակվել են COVID-19-ով, պետք է պատվաստվեն, քանի որ նրանց բնական դիմադրողականությունը (immunity) կարող է բավականաչափ երկար չպահպանվել կամ բավարար ուժեղ չլինել, և նրանք կարող են նորից վարակվել:

Պատվաստվելով՝ դուք կարող եք կատարել ձեր մասնաբաժինը՝ օգնելու դադարեցնել համաճարակը:

Որքա՞ն լավ են գործում պատվաստանյութերը

Պատվաստանյութերը արտակարգ լավ են գործում: Անգամ Դելտա ենթատեսակի դեպքում բոլոր 3 պատվաստանյութերը մեծապես նվազեցնում են COVID-19-ով վարակվելու հավանականությունը և արդյունավետ են ծանր հիվանդությունների, հոսպիտալացումների և մահերի կանխարգելման հարցում:

Դուք չեք համարվում ամբողջովին պատվաստված, քանի դեռ չի անցել 2 շաբաթ ժամանակ J&J-ի մեկ պատվաստանյութով պատվաստվելուց կամ Pfizer (**COMIRNATY**) կամ Moderna պատվաստանյութերի երկրորդ դեղաչափը ստանալուց հետո: Դա պայմանավորված է նրանով, որ պատվաստումից հետո ձեր մարմինն անհրաժեշտ է ժամանակ՝ COVID-19-ի նկատմամբ անվարակունակություն (immunity) ստեղծելու համար: Հնարավոր է վարակվել այս ժամանակահատվածում մինչև պատվաստանյութը կսկսի գործել, հետևաբար, կարևոր է, որ ամբողջ 2 շաբաթվա ընթացքում շարունակեք պաշտպանվել COVID-19-ից:

Ամբողջովին պատվաստվելուց հետո դեռևս առկա է փոքր վտանգ, որ դուք կարող եք վարակվել: Սա կոչվում է բեկոլ վարակ: Երբ պատվաստված մարդիկ վարակվում են, նրանք սովորաբար չեն հիվանդանում այնքան ծանր, որքան չպատվաստված մարդիկ, և նրանց ախտանիշները չեն տևում այնքան երկար, որքան չպատվաստված մարդկանց մոտ: Երբեմն նրանց մոտ ընդհանրապես ախտանիշներ չեն դրսևորվում:





Ո՞ր պատվաստանյութերն են հասանելի Միացյալ Նահանգներում

Մենդամթերքի և Դեղորայքի Վարչությունը (FDA) տվել է արտակարգ իրավիճակների ժամանակ օգտագործման թույլտվություն (EUAs) Միացյալ Նահանգներում օգտագործման համար նախատեսված COVID-19-ի դեմ երեք պատվաստանյութերին: Այդ պատվաստանյութերը պատրաստվում են Janssen/Johnson & Johnson (J&J), Pfizer-BioNTech և Moderna ընկերությունների կողմից:

8/23/21-ին FDA-ն COVID-19-ի դեմ Pfizer պատվաստանյութին տվեց 2 դեղաչափով օգտագործման լիարժեք թույլտվություն 16 տարեկան և ավելի բարձր տարիքի անձանց համար: Պատվաստանյութն այժմ վաճառվում է COMIRNATY ապրանքանիշի կողմից, սակայն դա ամբողջովին նույն Pfizer պատվաստանյութն է, որն առաջին անգամ օգտագործման թույլտվություն էր ստացել 2020 թվականի Դեկտեմբերին: Այս պատվաստանյութը դեռ թույլատրվում է որպես 2 դեղաչափից բաղկացած պատվաստանյութ 12-ից 15 տարեկան պատանիների համար, որպես լրացուցիչ դեղաչափ [թուլագած հմունային համակարգ ունեցող](#) որոշ մարդկանց համար, և որպես խթանիչ ([booster](#)) դեղաչափ 18 տարեկան և ավելի բարձր տարիքի որոշ մարդկանց համար:

Պատվաստանյութի անվտանգության վեց ամսվա տվյալների հավաքագրումից և վերլուծությունից հետո Pfizer-ը մտադիր է դիմել՝ ստանալու լիարժեք հաստատում 12-15 տարեկան երեխաների շրջանում պատվաստանյութի օգտագործման համար: Moderna-ն նույնպես դիմել է COVID-19-ի դեմ իր պատվաստանյութի օգտագործման լիարժեք հաստատման համար, և FDA-ն այժմ ստուգում է այդ պատվաստանյութի տվյալները:

Այս երեք պատվաստանյութերն էլ շարունակում են առաջարկվել CDC-ի կողմից:

Ո՞րն է արտակարգ իրավիճակներում օգտագործման թույլտվություն ստանալու (EUA) և օգտագործման լիարժեք հաստատում ստանալու միջև տարբերությունը

Մենդամթերքի և Դեղորայքի Վարչությունը (FDA) պահանջեց պատվաստանյութերի երկու ամսվա անվտանգության և արդյունավետության տվյալները՝ նախքան COVID-19-ի դեմ պատվաստանյութերին արտակարգ իրավիճակներում օգտագործման թույլտվություն (EUA) տրամադրելը: Դա ներառում էր տասնյակ հազարավոր մարդկանց մասնակցությամբ կլինիկական փորձարկումներ և մանրակրկիտ ստուգումներ և վերանայումներ: Բոլոր պատվաստանյութերին շարունակում են մանրակրկիտ հետևել՝ անվտանգությունը և արդյունավետությունը ստուգելու համար:

COVID-19-ի դեմ պատվաստանյութի լիարժեք հաստատման համար FDA-ն պահանջում է անվտանգության, արտադրության և արդյունավետության վերաբերյալ ավելի շատ տվյալներ ավելի երկար ժամանակամիջոցի համար, ինչպես նաև իրական կյանքից (ոչ կլինիկական փորձերից) տվյալներ:

Ի՞նչ է նշանակում Pfizer պատվաստանյութի հաստատումը FDA-ի կողմից

Դա նշանակում է, որ Pfizer (COMIRNATY) պատվաստանյութն այժմ ունի հաստատման միևնույն մակարդակը, ինչն ունեն մեզ բազմաթիվ այլ վարակներից պաշտպանող պատվաստանյութերը: Դրանք ներառում են հեպատիտի, կարմրուկի, ջրծաղիկի և պոլիոմիելիտի դեմ պատվաստանյութերը: Նախքան COMIRNATY-ի հաստատումը, Մենդամթերքի և Դեղորայքի





Վարչությունը (FDA) իրականացրեց արդյունավետության և անվտանգության լրացուցիչ տվյալների վերլուծություն՝ ի հավելումս EUA-ի շրջանակներում կատարված մանրակրկիտ փորձարկումների և ստուգումների: Սա ներառում էր մոտ 12,000 մարդկանց տվյալների ուսումնասիրումը, որոնց հետևել էին առնվազն 6 ամիս, ինչպես նաև իրական կյանքում (ոչ կլինիկական փորձարկումներ) անվտանգության վերահսկման համակարգերից ստացված տվյալների ուսումնասիրումը: FDA-ի լիարժեք հաստատումը կարևոր քայլ է, որը պետք է վստահություն ներշնչի այն մարդկանց, որոնք մտահոգություններ ունեն պատվաստման շուրջ:

ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐԻ ԴԵՂԱԶՎՓԵՐԸ

Ի՞նչ դեղաչափերով են ներարկվում պատվաստանյութերը

- J&J/Janssen պատվաստանյութը ներարկվում է մեկ դեղաչափով:
- Pfizer պատվաստանյութը ներարկվում է 2 դեղաչափով՝ 21 օր տարբերությամբ:
- Moderna պատվաստանյութը ներարկվում է 2 դեղաչափով՝ 28 օր տարբերությամբ:

Սրանք հայտնի են որպես հիմնական դեղաչափեր: Բոլոր 3 պատվաստանյութերի դեպքում դուք չեք համարվում [ամբողջովին պատվաստված](#), եթե չի անցել 2 շաբաթ ձեր վերջին ներարկումից հետո:

Եթե ուշացրել եք 2 դեղաչափից բաղկացած պատվաստանյութի երկրորդ դեղաչափը, ապա ձեզնից չի պահանջվում նորից սկսել պատվաստանյութի շարքը: Կարևոր է, որ երկու դեղաչափերն էլ լինեն նույն տեսակի պատվաստանյութից:

Եթե ունեք միջին մակարդակի կամ խիստ թուլացած իմունային համակարգ (իմունային անբավարարություն) և արդեն ստացել եք Pfizer կամ Moderna պատվաստանյութերի երկու դեղաչափերը, խորհուրդ է տրվում ստանալ նույն պատվաստանյութի 3-րդ դեղաչափը: Այն պետք է ներարկվի ձեր երկրորդ դեղաչափից 28 օր հետո կամ ավելի ուշ: Լրացուցիչ դեղաչափը տվյալ պահին խորհուրդ չի տրվում J&J պատվաստանյութով պատվաստված անձանց, քանի որ FDA-ն դեռ գնահատում է լրացուցիչ դեղաչափի արդյունավետությունը թույլ իմունային համակարգ ունեցող անձանց համար: Լրացուցիչ տեղեկությունների համար ստորև տե՛ս [Կարո՞ղ եմ թույլ իմունային համակարգ ունեցող մարդիկ պատվաստվել COVID-19-ի դեմ](#):

Ներկա պահին մարդկանց որոշ խմբերին առաջարկվում է Pfizer պատվաստանյութի խթանիչ (booster) դեղաչափը (տե՛ս [ստորև](#)):

Ե՞րբ եմ ես համարվում ամբողջովին պատվաստված

Դուք համարվում եք COVID-19-ի դեմ [ամբողջովին պատվաստված](#) երկու շաբաթ անց, եթե՝

- Դուք ստացել եք COVID-19-ի դեմ Johnson&Johnson (J&J)/Janssen պատվաստանյութի միակ դեղաչափը, կամ
- Դուք ստացել եք COVID-19-ի դեմ Pfizer (**COMIRNATY**) կամ Moderna պատվաստանյութերի երկրորդ դեղաչափը, կամ
- Դուք ավարտել եք COVID-19-ի դեմ այն պատվաստանյութի շարքը, որն Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության կողմից ընդգրկվել է արտակարգ իրավիճակներում օգտագործման համար:





Եթե դուք բավարարում եք այս չափանիշները, դուք համարվում եք ամբողջովին պատվաստված, նույնիսկ եթե այժմ իրավասու եք խթանիչ (booster) կամ լրացուցիչ դեղաչափի համար, սակայն դեռ չեք ստացել այն:

Իմունային Անբավարարություն ունեցող անձանց վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս ստորև՝ [Կարո՞ղ եմ թույլ իմունային համակարգ ունեցող մարդիկ պատվաստվել COVID-19-ի դեմ:](#)

Ո՛ւմ եմ խորհուրդ տրվում խթանիչ (booster) դեղաչափերը

Այս պահին խթանիչ դեղաչափը իրավասու են ստանալ միայն այն մարդիկ, որոնք ստացել են Pfizer-ի երկու դեղաչափերը և բավարարում են որոշ պայմաններ.

- Հետևյալ մարդիկ **պետք է** ստանան Pfizer պատվաստանյութի խթանիչ դեղաչափը Pfizer պատվաստանյութի իրենց 2-րդ դեղաչափը ստանալուց 6 ամիս հետո կամ ավելի ուշ.
 - 65 տարեկան և ավելի բարձր տարիքի անձինք
 - Երկարաժամկետ խնամքի հաստատություններում բնակվող 18 տարեկան և ավելի բարձր տարիքի անձինք
 - 50-64 տարեկան անձինք, որոնք ունեն [որոշակի առողջական խնդիրներ](#) կամ որոնք ունեն սոցիալական և տնտեսական խնդիրներ, որոնց պատճառով գտնվում են COVID-19-ով վարակվելու բարձր վտանգի ներքո:
- Հետևյալ մարդիկ **կարող են դիտարկել** Pfizer պատվաստանյութի խթանիչ դեղաչափի ընդունումը Pfizer պատվաստանյութի իրենց 2-րդ դեղաչափը ստանալուց առնվազն 6 ամիս հետո՝ հիմնվելով իրենց անհատական օգուտների և հավանական վտանգների վրա:
 - 18-49 տարեկան անձինք, որոնք ունեն [որոշակի առողջական խնդիրներ](#)
 - 18-64 տարեկան անձինք, որոնք գտնվում են COVID-19-ով վարակման և այն փոխանցելու ավելի մեծ վտանգի ներքո*՝ ելևելով իրենց աշխատանքային կամ հաստատության միջավայրից (institutional setting):

Եթե ունեք հարցեր վտանգների և օգուտների հետ կապված և այն մասին, արդյոք խթանիչ (booster) դեղաչափի ներարկումը արդարացված է ձեզ համար, խոսեք ձեր բժշկի կամ բուժաշխատողի հետ:

* Հաստատությունների (institutional setting) օրինակներ են՝ բժշկական հաստատությունները, դպրոցները, համատեղ կացության տները, բանտերը և ապաստարանները: Տվյալ պահին CDC-ն COVID-19-ով վարակման բարձր վտանգի ներքո գտնվող մասնագիտությունները սահմանում է հետևյալ կերպ.

- Առաջին օգնություն տրամադրողները (բուժաշխատողներ, հրշեջներ, ոստիկաններ, համատեղ բնակության խնամքի կենտրոնների աշխատակիցներ)
- Ուսումնական անձնակազմ (ուսուցիչներ, դպրոցի աշխատակիցներ, ցերեկային խնամքի կենտրոնների աշխատողներ)
- Մենդամթերքի և գյուղատնտեսական ոլորտի աշխատողներ
- Արտադրության ոլորտի աշխատողներ
- Ուղղիչ հաստատությունների աշխատողներ
- Միացյալ Նահանգների Փոստային Ծառայության աշխատակիցներ
- Հանրային տրանսպորտի աշխատողներ
- Մթերային խանութների աշխատողներ





Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք [COVID-19-ի դեմ Pfizer-BioNTech Պատվաստանյութի Հավելյալ Նեղարկում](#) և Կալիֆորնիայի Հանրային Առողջության Վարչության [COVID-19-ի դեմ Pfizer խթանիչների](#) (booster) կայքէջը:

Եթե մենք խթանիչ դեղաչափի անհրաժեշտություն ունենք, արդյո՞ք դա նշանակում է, որ պատվաստանյութերը չեն գործում

Ոչ: Պատվաստանյութերը լավ են գործում: COVID-19-ի դեմ պատվաստանյութերը շարունակում են նշանակալիորեն արդյունավետ լինել ծանր հիվանդությունների, հոսպիտալացումների և մահերի վտանգի նվազեցման հարցում, ներառյալ Դելտա ենթատեսակից պաշտպանելու հարցում: Մենք շարունակում ենք տեսնել բարձր արդյունավետությամբ պաշտպանություն հոսպիտալացումներից և վարակման ծանր հետևանքներից ամբողջովին պատվաստված մարդկանց շրջանում: Այնուամենայնիվ, հանրային առողջության վարչության փորձագետները սկսել են նկատել վարակի դեմ թուլացած պաշտպանության և մեղմից դեպի միջին մակարդակի հիվանդությունների որոշ նշաններ բնակչության որոշ շրջանակներում:

Գիտության և վիրուսի զարգացմանը զուգահեռ փոփոխվում են նաև պատվաստանյութերի վերաբերյալ հորդորները: Խթանող դեղաչափերն ընդունված են բազմաթիվ պատվաստանյութերի համար: Գիտնականները և բժիշկ-փորձագետները շարունակում են ուշադիր հետևել տարբեր տարիքի և առողջության տարբեր ռիսկային գործոններ ունեցող մարդկանց՝ անվարակունակության (immunity) թուլացման նշաններ հայտնաբերելու համար: Նրանք նաև հետևում են, թե որքան լավ են պատվաստանյութերը պաշտպանում վիրուսի նոր ենթատեսակներից: FDA-ի և CDC-ի փորձագետները շարունակում են ուսումնասիրել վերջին փաստերը՝ որոշելու, թե արդյոք խթանիչ դեղաչափեր պետք է առաջարկվեն մարդկանց ավելի շատ խմբերին:

Ե՞րբ կարող եմ ստանալ COVID-19-ի խթանիչ դեղաչափը, եթե ես առաջարկվող խմբերից որևէ մեկում ՉԵՄ

Այս պահին հայտնի չէ: Հնարավոր է՝ բնակչության լրացուցիչ շրջանակներին առաջարկվի խթանիչ դեղաչափը, երբ ավելի շատ տվյալների հասանելի դառնան: Միացյալ Նահանգներում COVID-19-ի դեմ հաստատված և թույլատրված պատվաստանյութերը շարունակում են շատ արդյունավետ լինել ծանր հիվանդությունների, հոսպիտալացումների և մահվան վտանգի նվազեցման գործում: Փորձագետները ուսումնասիրում են գոյություն ունեցող բոլոր տվյալները՝ հասկանալու համար, թե որքան լավ են պատվաստանյութերը ազդում բնակչության տարբեր շրջանակների վրա: Սա ներառում է՝ հետևել, թե ինչպես են վիրուսի ենթատեսակները, օրինակ՝ Դելտան, ազդում պատվաստանյութի արդյունավետության վրա:

Արդյո՞ք Moderna կամ Johnson & Johnson պատվաստանյութերով պատվաստված մարդիկ պետք է ստանան խթանիչ դեղաչափը

Այս պահին՝ ոչ: Դա պայմանավորված է նրանով, որ Սննդի և Դեղորայքի Վարչությունը (FDA) թույլատրել է Pfizer պատվաստանյութը՝ որպես խթանիչ դեղաչափ, միայն այն մարդկանց համար, որոնք արդեն ստացել են Pfizer պատվաստանյութի 2 դեղաչափերը: Moderna կամ J&J պատվաստանյութերը ստացած տարեցները, առողջական խնդիրներ ունեցող անձինք և այն անձինք, որոնք աշխատում կամ ապրում են բարձր վտանգավորությամբ հաստատություններում, ամենայն հավանականությամբ, խթանիչ դեղաչափի անհրաժեշտություն կունենան: Առաջիկա





շաբաթների ընթացքում ակնկալվում են Moderna և J&J պատվաստանյութերի խթանիչ դեղաչափերի արդյունավետության և անվտանգության վերաբերյալ ավելի շատ տվյալներ, և առաջարկություններ կներկայացվեն այն մարդկանց, որոնք պատվաստվել են այդ պատվաստանյութերով:

Սկստի ունեցե՞ք, որ մեղմ կամ խիստ թուլացած իմունային համակարգ ունեցող մարդկանց, որոնք ստացել են Pfizer կամ Moderna պատվաստանյութերի 2 դեղաչափերը, խորհուրդ է տրվում ստանալ նույն պատվաստանյութերի լրացուցիչ դեղաչափը: Այն կարող է ներարկվել 2-րդ դեղաչափի ներարկումից առնվազն 28 օր անց (տե՛ս [Կարո՞ղ եմ թույլ իմունային համակարգ ունեցող մարդիկ պատվաստվել COVID-19-ի դեմ](#)):

Որո՞նք են խթանիչ դեղաչափը ստանալու վտանգները

Մինչ այժմ, Pfizer պատվաստանյութի խթանիչ դեղաչափին հաջորդող [արձագանքները, որոց մասին հաղորդվել է](#), նման են 2 դեղաչափից բաղկացած հիմնական պատվաստանյութերի արձագանքներին: Ներարկման տեղում ցավը և հոգնածության զգացողությունը եղել են ամենատարածված կողմնակի ազդեցությունները: Ընդհանուր առմամբ, կողմնակի ազդեցությունների մեծ մասը եղել են մեղմից դեպի միջին: 2 դեղաչափից բաղկացած հիմնական պատվաստանյութերի դեպքում [տուրջ կողմնակի ազդեցությունները հազվադեպ են](#), սակայն կարող են դրսևորվել: Շատերի համար խթանիչ ներարկման առավելությունները գերազանցում են հայտնի և հավանական վտանգները:

Արդյո՞ք ինձնից պահանջվելու է ներկայացնել բժշկի կողմից գրություն կամ դեղատոմս՝ լրացուցիչ կամ խթանիչ դեղաչափը ստանալու համար

Ոչ: Եթե իրավասու եք, կարող եք ինքնուրույն հաստատել (ինքնուրույն ապացուցել) այդ հանգամանքը: Դուք կարող եք ստանալ խթանիչ դեղաչափն այն բոլոր վայրերում, որտեղ տրամադրվում են Pfizer պատվաստանյութերը: Եթե գնաք Հանրային Առողջության Վարչության կողմից ղեկավարվող պատվաստման վայր, ձեզնից կպահանջվի ստորագրել [\(ինքնուրույն\) հաստատման այս ձևը](#): Այցելե՛ք «[Ինչպես պատվաստվել](#)» կայքէջ՝ գտնելու այն վայրը, որն առաջարկում է ձեզ անհրաժեշտ պատվաստանյութի տեսակը:

ՊԱՏՎԱՍՏՈՒՄ

Արդյո՞ք ես պետք է վճարեմ COVID-19-ի դեմ պատվաստման համար

Ոչ: Եթե ունեք ապահովագրություն, ձեր բժիշկը կամ դեղատունը կարող են ձեր ապահովագրական ընկերությունից գանձել ձեր պատվաստման վճարը: Բժշկական ապահովագրություն չունեցող անձինք նույնպես կարող են անվճար պատվաստվել COVID-19-ի դեմ: Չկան սեփական գրպանից վճարներ:

Արդյո՞ք COVID-19-ի դեմ պատվաստվելիս ինձ կհարցնեն իմ ներգաղթի կարգավիճակի մասին

Ոչ: COVID-19-ի դեմ պատվաստումը կատարվում է անվճար՝ անկախ ներգաղթի կարգավիճակից: COVID-19-ի դեմ պատվաստվելու դեպքում ձեզ չեն հարցնի ձեր ներգաղթի կարգավիճակի մասին: Ձեր բժշկական տեղեկությունները գաղտնի են, և COVID-19-ի դեմ պատվաստումը չի ազդում ձեր ներգաղթի կարգավիճակի վրա: Պատվաստվելու համար ձեզ հարկավոր չէ կառավարության





Կողմից տրված անձը հաստատող փաստաթուղթ (ID) կամ նամակ ձեր գործատուի կողմից: Ներգաղթի վերաբերյալ հարցերի համար այցելեք Ներգաղթյալների Հարցերով Գրասենյակի (Office of Immigrant Affairs) կայքէջը՝ oia.lacounty.gov կամ զանգահարեք 800-593-8222 հեռախոսահամարով:

Արդյո՞ք COVID-19-ի դեմ պատվաստվելիս ինձնից պահանջվելու է տրամադրել բջջային հեռախոսահամար կամ էլ. հասցե

Ոչ: Պատվաստվելիս ձեզ կհնդրեն տրամադրել էլ. հասցե կամ բջջային հեռախոսահամար: Այս տեղեկատվությունը մուտքագրվելու է Կալիֆորնիա Նահանգի Պատվաստումների Գրանցամատյանում (CAIR), որպեսզի կարողանաք ձեռք բերել COVID-19-ի դեմ պատվաստման թվային քարտը: Այն կարող է օգտագործվել նաև հիշեցումներ ուղարկելու համար, եթե նշանակվեն կամ առաջարկվեն COVID-19-ի դեմ պատվաստանյութի լրացուցիչ դեղաչափեր: Պատվաստումների թվային գրանցումը ձեր պատվաստման կարգավիճակն ապացուցելու անվճար և հարմարավետ տարբերակ է: Այն հասկապես օգտակար է, եթե կորցնեք ձեր պատվաստման սպիտակ քարտը: Ձեզնից չի պահանջվում տրամադրել ձեր էլ. հասցեն կամ բջջային հեռախոսահամարը՝ պատվաստվելու և CDC-ի COVID-19-ի դեմ պատվաստման սպիտակ քարտը ձեռք բերելու համար: Սակայն այն կարող է բարդացնել հետագայում պատվաստանյութերի թվային քարտը ձեռք բերելու գործընթացը: Պատվաստումների թվային քարտի մասին կարող եք իմանալ ավելին myvaccinerecord.cdph.ca.gov կայքէջում, իսկ գաղտնիության պահպանման մասին՝ [այստեղ](#):

Ինչպե՞ս կարող եմ պատվաստվել

Պատվաստանյութերը հասանելի են Լոս Անջելեսի Շրջանի հարյուրավոր վայրերում, ներառյալ՝ կլինիկաները, դեղատները, աշխատավայրերը, դպրոցները, երկրպագության վայրերը, տարեցների բնակարանային միությունները և երկարատև ինամքի հաստատությունները: Կան նաև պատվաստումների համայնքային կենտրոններ, ինչպես նաև շարժական/օր-օր կայաններ, որոնք գտնվում են մետրոյի կայարաններում, այգիներում և նմանատիպ այլ վայրերում: Տեսիլն պատվաստումը հասանելի է տունը լքել չկարողացող անձանց համար: Պատվաստումների շատ վայրեր նախօրոք ժամադրում չեն պահանջում:

Պատվաստման վայր գտնելու կամ տնային պատվաստում [պահանջելու](#) համար այցելեք VaccinateLACounty.com և սեղմեք «[Ինչպե՞ս Պատվաստվել](#)»: Օգնության համար կարող եք զանգահարել **Հանրային Առողջապահության Վարչության (DPH) Պատվաստումների Չանգերի Կենտրոն՝ 833-540-0473** հեռախոսահամարով շաբաթը 7 օր՝ առավոտյան 8-ից երեկոյան 8:30-ը: Նրանք կարող են հաշմանդամություն ունեցող մարդկանց համար կազմակերպել տնային պատվաստում, դեպի պատվաստման վայր անվճար փոխադրում կամ օգնել տրամադրել պարատրանզիտ (հատուկ միջանկյալ տրանսպորտ հաշմանդամություն ունեցող անձանց համար) և կատարել այլ ծառայություններ: Տեղեկությունները հասանելի են բազմաթիվ լեզուներով՝ 24/7՝ զանգահարելով 2-1-1 համարով:

Ես նոր եմ տեղափոխվել Լոս Անջելեսի Շրջան, և իմ 2-րդ դեղաչափը ստանալու ժամանակն է: Որտե՞ղ կարող եմ ստանալ այն:

Այցելեք VaccinateLACounty.com (տե՛ս վերոնշյալ հրահանգները) և սեղմեք ֆիլտրը (զտիչը)՝ գտնելու այն վայրը, որն առաջարկում է նույն տեսակի պատվաստանյութ, որը ստացել եք ձեր առաջին դեղաչափի ժամանակ: Ձեր 2-րդ դեղաչափը ստանալու օրը ձեզ հետ բերեք CDC-ի պատվաստման քարտը:





Որտեղի՞ց կարող եմ ձեռք բերել իմ պատվաստման գրանցումների պատճենը

CDC-ի COVID-19-ի դեմ Պատվաստումների Գրանցման Քարտը (Սպիտակ Քարտ) պատվաստման պաշտոնական ապացույցն է: Պատվաստվելուց հետո յուրաքանչյուրին պետք է տրվի մեկ օրինակ: **Խնդրում ենք պահպանել այն ապահով կերպով, քանի որ այն փոխարինման ենթակա չէ:** Դիտարկեք այն լուսանկարելը կամ պատճենելը:

Բոլոր նրանք*, ովքեր պատվաստվել են Կալիֆորնիայում, կարող են պահանջել COVID-19-ի դեմ պատվաստման գրանցման թվային տարբերակը այստեղ՝ myvaccinerecord.cdph.ca.gov: Սա նաև պաշտոնական գրանցումն է: Այն կարելի է ներբեռնել Google Pay-ի թվային դրամապանակում՝ Android հեռախոսներում: (Apple Wallet-ի տարբերակը iPhone-ների համար հասանելի կլինի շուտով): Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք [Պատվաստման Գրանցումներ](#) կայքէջը:

* Եթե ձեր պատվաստումն իրականացրել է դաշնային հաստատություն (օր.՝ Պաշտպանության Նախարարություն, Ամերիկայի Բնիկների Առողջապահական Ծառայություններ կամ Վետերանների Հարցերով Վարչություն), դուք պետք պատվաստման վերաբերյալ գրանցումը (քարտը) պահանջեք անմիջապես այն հաստատությունից:

ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՍԻՆ

Ինչպե՞ս են գործում պատվաստանյութերը

Պատվաստանյութերը գործում են՝ պատրաստելով ձեր մարմնի բնական պաշտպանական մեխանիզմները՝ ճանաչելու այն մանրէները, որոնք կարող են ձեզ հիվանդացնել, և դրանց դեմ պայքարելու համար:

- Որոշ պատվաստանյութեր պարունակում են մանրէների մահացած կամ թուլացած ձևերը:
- Մյուսները պարունակում են նյութեր, որոնք նման են մանրէների մասնիկների:
- COVID-19-ի դեմ պատվաստանյութերը մարմնին սովորեցնում են արտադրել սպիտակուցներ, որոնք նման են COVID-19-ի պատճառ հանդիսացող վիրուսի մասնիկներին: Նրանք չեն պարունակում COVID-19-ի դեմ վիրուսը որևէ ձևով՝ կենդանի, թուլացած կամ մահացած: (Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս «Ինչպե՞ս են գործում COVID-19-ի դեմ պատվաստանյութերը» հարցը):

Երբ դուք պատվաստվում եք ցանկացած պատվաստանյութով, ձեր իմունային համակարգը արձագանքում է դրան՝

- Արտադրելով հակամարմիններ: Սրանք սպիտակուցներ են, որոնք բնական կերպով արտադրվում են իմունային համակարգի կողմից՝ պայքարելու հիվանդության դեմ:
- Պատրաստելով ձեր իմունային բջիջները՝ արձագանքելու հետագա վարակին:
- Հիշելով հիվանդությունը և դրա դեմ պայքարելու ձևը: Եթե պատվաստվելուց հետո վարակվում եք տվյալ մանրէով, ձեր իմունային համակարգը կարող է արագ ոչնչացնել այն մինչև դուք կվարակվեք:

Սա այն է, ինչը պատվաստանյութերը դարձնում է այդքան արդյունավետ: **Վարակվելուց հետո հիվանդությունը բուժելու փոխարեն, պատվաստանյութերը կարող են ի սկզբանե կանխել մեր վարակվելը:**





Ինչպե՞ս են գործում COVID-19-ի դեմ պատվաստանյութերը

COVID-19-ի դեմ բոլոր 3 պատվաստանյութերը գործում են՝ սովորեցնելով մեր իմունային բջիջներին ինչպես ստեղծել հասկ-սպիտակուցներին նմանեցված սպիտակուցներ (COVID-19-ի վիրուսի մակերևույթին գտնվող թագանման հասկեր՝ spike proteins): Հասկ-սպիտակուցի ստեղծումը չի վնասում մեր բջիջները:

- Մեր իմունային համակարգը նկատում է հասկ-սպիտակուցը և հասկանում է, որ այն օտար է:
- Մեր մարմիններն արձագանքում են՝ ստեղծելով իմունային արձագանք: Մեր մարմինը ստեղծում է հակամարմիններ, որոնք կարող են գործել COVID-19-ի վիրուսի հասկ-սպիտակուցի դեմ, ինչպես նաև նախապատրաստում է իմունային բջիջները: Սա կպաշտպանի մեզ, եթե ապագայում վարակվենք այդ վիրուսով:

COVID-19-ի դեմ պատվաստանյութերը տարբերվում են նրանով, թե ինչպես են մեր բջիջներին սովորեցնում ստեղծել հասկ-սպիտակուցներ.

- Pfizer-ի և Moderna-ի կողմից պատրաստված պատվաստանյութերը կոչվում են mRNA պատվաստանյութեր: Ինֆորմացիոն (ևսև՝ տեղեկատվական) ՌՆԹ-ն (Messenger RNA-ն կամ mRNA) գենետիկ նյութ է, որը մեր մարմնին ասում է՝ ինչպես ստեղծել սպիտակուցներ: Պատվաստանյութում պարունակվող իՌՆԹ-ն փաթաթված է յուղոտ պղպջակներով (հայտնի՝ որպես լիպիդային նանոմասնիկներ): Երբ իՌՆԹ-ն ներթափանցում է մեր բջիջներ, այն մեր բջիջներին սովորեցնում է՝ ինչպես ստեղծել հասկ-սպիտակուցի պատճեններ:
- J&J/Janssen-ի կողմից պատրաստված պատվաստանյութը կոչվում է վիրուսային վեկտորի պատվաստանյութ: Վեկտորը (կամ վարակը տարածողը) օգտագործում է անվնաս վիրուսը՝ գենետիկ նյութը մեր բջիջներին հասցնելու համար: Մեր բջիջները կարող են գենետիկ նյութը և արտադրում են իՌՆԹ (mRNA), և այդ իՌՆԹ -ն մեր բջիջներին սովորեցնում է արտադրել հասկ-սպիտակուց: Վիրուսային վեկտորը սովորական մրսաձուլության վիրուսի անվնաս տարբերակ է: Այն չի կարող վերարտադրվել մեր բջիջների ներսում կամ հիվանդության պատճառ դառնալ և չի կարող որևէ կերպ փոխել մեր ԴՆԹ-ն:

Կարող եք իմանալ ավելին CDC-ի [Հասկանալով՝ Ինչպես են Գործում COVID-19-ի Դեմ Պատվաստանյութերը](#) կայքէջում:

Ի՞նչ են պարունակում պատվաստանյութերը

Բաղադրիչների ամբողջական ցանկի համար տե՛ս յուրաքանչյուր պատվաստանյութի՝ Պատվաստվող Անձի և Իր Խնամակալի Համար Տեղեկատվական Թերթիկը՝ [COVID-19-ի դեմ Pfizer-BioNTech պատվաստանյութ](#), [COVID-19-ի դեմ Moderna պատվաստանյութ](#) և [COVID-19-ի դեմ J&J/Janssen պատվաստանյութ](#): Pfizer (COMIRNATY) և Moderna պատվաստանյութերը պարունակում են Պոլիէթիլենգլիկոլ (PEG), իսկ J&J պատվաստանյութերը պարունակում են պոլիսորբատ: Պատվաստանյութերից ոչ մեկը չի պարունակում ձու, ժելատին, լատեքս կամ կոնսերվանտներ:

Արդյո՞ք COVID-19-ի դեմ պատվաստանյութերը պարունակում են ընդհատված պտղի (աբորտ) բջիջներ

Ոչ, Միացյալ Նահանգներում օգտագործման համար հասանելի COVID-19-ի դեմ պատվաստանյութերից ոչ մեկը չի պարունակում պտղի որևէ հյուսվածք կամ բջիջ:





- **Pfizer-ը և Moderna-ն** COVID-19-ի դեմ իրենց պատվաստանյութերը մշակելու կամ արտադրելու համար չեն օգտագործել պտղի բջիջներ: Սակայն նրանք օգտագործել են պտղի բջիջներ լաբորատոր փորձարկումների համար՝ նախքան մարդկանց վրա իրենց պատվաստանյութերը փորձարկելը:
- **Johnson & Johnson-ը** օգտագործել է պտղի բջիջ՝ COVID-19-ի դեմ իր պատվաստանյութը մշակելու և փորձարկելու համար: Նրանք օգտագործել են այն նաև արտադրության համար: COVID-19-ի դեմ պատվաստանյութերն իրենց մեջ չեն պարունակում պտղի բջիջներ:

Պտղի բջիջների շարքը ստեղծվել է լաբորատորիաներում 1973 և 1985 թվականներին անցկացված 2 փորձերի բջիջներից: Օգտագործված պտղի որևէ բջիջ չի ստացվել վերջերս կատարված փորձից կամ միայն պատվաստանյութերի մշակման կամ այլ հետազոտությունների նպատակով կատարված փորձից:

Կաթոլիկ Եկեղեցին վերանայել է այս նպատակով պտղի բջիջների օգտագործումը և հայտարարել է, որ «բարոյապես ընդունելի է COVID-19-ի դեմ նախատեսված պատվաստանյութերով պատվաստվելը, որոնց հետազոտության և արտադրության գործընթացում օգտագործվել են վիժեցված (աբորտ) պտուղների բջիջներ»: Եթե այս հարցը մտահոգում է ձեզ, մենք խրախուսում ենք ձեզ ուշադիր կարդալ [COVID-19-ի դեմ Պատվաստանյութեր և Պտղի Բջիջներ](#) փաստաթուղթը, որպեսզի տեղեկացված որոշում կայացնենք պատվաստման վերաբերյալ:

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՂՄԱԿԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կարո՞ղ եք վարակվել COVID-19-ով պատվաստանյութից

Ոչ: Դուք չեք կարող վարակվել COVID-19-ով պատվաստանյութից: COVID-19-ի դեմ պատվաստանյութից ոչ մեկը չի պարունակում COVID-19-ը առաջացնող վիրուս:

Եթե պատվաստվելուց կարճ ժամանակ անց դուք հիվանդացել եք COVID-19-ով, ապա դա պայմանավորված է նրանով, որ դուք որևէ անձից վարակվել եք COVID-19-ով պատվաստվելու ժամանակահատվածում: Վարակվելուց հետո ախտանիշների ի հայտ գալը կարող է տևել մինչև 14 օր: Այսպիսով, եթե դուք վարակվում եք պատվաստվելուց անմիջապես առաջ, հնարավոր է՝ մինչև պատվաստվելը չհիվանդանաք (ախտանիշները ի հայտ գան պատվաստվելուց հետո):

Հնարավոր է նաև վարակվել պատվաստվելուց հետո, քանի որ ձեր մարմինն ժամանակ է հարկավոր անվարակունակություն (immunity) ստեղծելու համար: Եվ, չնայած, որ պատվաստանյութերը շատ արդյունավետ են, որևէ պատվաստանյութ 100%-ով արդյունավետ չէ:

Երբեմն պատվաստվելուց հետո մեկ կամ օրկու օր շարունակ մարդիկ ջերմություն են ունենում կամ հոգնածություն են զգում: Պատվաստման այդպիսի կողմնակի ազդեցությունները բնական են և ազդանշան են, որ մարմինը ստեղծում է անվարակունակություն (immunity): Այդ ազդեցությունները պետք է անհետանան մի քանի օրվա ընթացքում:

Արդյո՞ք ինձ համար անվտանգ է COVID-19-ի դեմ պատվաստումը, եթե մի օր ցանկանամ երեխա ունենալ

Այո: CDC-ն խորհուրդ է տալիս պատվաստվել 12 տարեկան և ավելի բարձր տարիքի բոլոր մարդկանց՝ ներառյալ հղի, կրծքով կերակրող, տվյալ պահին հղիանալ փորձող կամ ապագայում





հղիացած մարդկանց: Հղիները ավելի մեծ հավանականությամբ ծանր կհիվանդանան COVID-19-ով, քան ոչ հղիները: Բացի այդ, հղիների մոտ ավելի մեծ է բարդություններ լինելու հավանականությունը, ինչպես օրինակ՝ վաղաժամ ծննդաբերությունը, եթե նրանք վարակված լինեն COVID-19-ով:

Չկա որևէ ապացույց, որ COVID-19-ի դեմ պատվաստանյութերը առաջացնում են հղիության, ներառյալ՝ ընկերքի զարգացման հետ կապված որևէ խնդիր: Ինչպես նաև չկա ապացույց, որ կանանց կամ տղամարդկանց պտղաբերության հետ կապված խնդիրները հանդիսանում են որևէ պատվաստանյութի կողմնակի ազդեցություններ, ներառյալ COVID-19-ի դեմ պատվաստանյութերը: Պատվաստանյութերը չեն փոխում մարդու ԴՆԹ-ն, և չկա որևէ ապացույց, որ դրանք ազդում են սեռական հասունացման փուլում գտնվող անձանց կամ պատանիների զարգացման վրա:

Լրացուցիչ տեղեկությունների համար ստրև տե՛ս CDC-ի կայքէջը՝ [COVID-19-ի դեմ Պատվաստանյութերի Այն Մարդկանց Համար, Որոնք Ուզում են Երեխա ունենալ](#):

Կարո՞ղ է COVID-19-ի դեմ պատվաստումը ազդել իմ դաշտանային ցիկլի վրա

Որոշ մարդիկ հայտնել են պատվաստվելուց հետո իրենց դաշտանային ցիկլում փոփոխությունների մասին, ներառյալ ավելի շատ հոսքի և ցավոտ կծկումների մասին: Մենք դեռ չգիտենք՝ արդյո՞ք այդ փոփոխությունները պայմանավորված են պատվաստմամբ, թե ոչ. դաշտանային ցիկլում փոփոխությունների մասին չի հաղորդվել պատվաստումների փորձարկումների ժամանակ, և այս հարցի վերաբերյալ դեռևս ուսումնասիրության արդյունքներ չկան: Կարևոր է հիշել, որ շատ հանգամանքներ կարող են ազդել դաշտանային ցիկլերի փոփոխության վրա, ինչպիսիք են լարվածությունը, քնի, սննդակարգի, վարժությունների և որոշ դեղորայքի փոփոխությունները: Անկանոն դաշտանային ցիկլերը շատ տարածված են դեռահասների շրջանում և կարող են ընդհանրապես որևէ հատուկ պատճառ չունենալ: Եթե ունեք անհանգստություն ձեր կամ ձեր երեխայի դաշտանային ցիկլի առնչությամբ, խոսեք բժշկի հետ:

Որո՞նք ենք COVID-19-ի դեմ պատվաստանյութերի ընդհանուր կողմնակի ազդեցությունները

COVID-19-ի դեմ պատվաստվելուց հետո ձեզ մոտ կարող են դրսևորվել կողմնակի ազդեցություններ, որոնք նման են գրիպի կամ գոտևորող հերպեսի (shingles) դեմ պատվաստվելուց հետո դրսևորվող կողմնակի ազդեցություններին: Երկու դեղաչափից բաղկացած պատվաստանյութերի դեպքում կողմնակի ազդեցություններն ավելի հաճախ են դրսևորվում երկրորդ դեղաչափը ստանալուց հետո: Այդ կողմնակի ազդեցությունները կարող են սահմանափակել ամենօրյա գործողություններ կատարելու ձեր հնարավորությունը, սակայն դրանք պետք է անհետանան մեկ-երկու օրվա ընթացքում: Ոչ բոլորի մոտ են դրսևորվում կողմնակի ազդեցություններ: Դրանք կարող են ներառել՝

- Ձերմություն, դող և մկանային ցավեր
- Գլխացավ
- Հոգևածության զգացողություն
- Թևի ցավ կամ կարմրություն

Կողմնակի ազդեցությունները բնական են և նշան են, որ պատվաստումը գործում է: Դրանք ցույց են տալիս, որ ձեր մարմինը սովորում է պայթարել վիրուսի դեմ և ստեղծում է անվարակունակություն (immunity): Ոչ բոլորի մոտ են դրսևորվում կողմնակի ազդեցություններ: Քանի դեռ ձեզ պատվաստանյութեր տրամադրող բժիշկը կամ ձեր բժիշկը ձեզ չեն կարգադրել





չպատվաստվել, կարևոր է ստանալ երկրորդ դեղաչափը, նույնիսկ եթե առաջին դեղաչափից հետո ձեզ մոտ դրսևորվել են կողմնակի ազդեցություններ:

Կապ հաստատեք ձեր բժշկի հետ, եթե ձեզ մոտ դրսևորվում են՝

- Պատվաստման կողմնակի ազդեցություններ, որոնք տևում են ավելի քան 2 օր
- Նոր ախտանիշներ, որոնք ի հայտ են գալիս պատվաստվելուց ավելի քան 2 օր անց
- Հազ, շնչարգելություն, քթահոսություն, կոկորդի ցավ կամ համի կամ հոտի նոր առաջացած կորուստ (քանի որ դրանք չեն հանդիսանում պատվաստման կողմնակի ազդեցություններ)
- Ախտանիշներ, որոնք վատթարանում են կամ անհանգստացնում են ձեզ:

Կա՞ն արդյոք լուրջ կողմնակի ազդեցություններ

Այո: Լուրջ կողմնակի ազդեցություններ կարող են դրսևորվել, սակայն շատ հազվադեպ:

Պատվաստանյութերի անվտանգության կառավարման համակարգը հայտնաբերել է չորս լուրջ առողջական խնդիրներ, որոնք ներկայացված են ստորև: Պատվաստանյութը ստանալուց հետո տե՛ս [Պատվաստվելուց հետո](#)՝ իմանալու հնարավոր ախտանիշների մասին, որոնց նկատմամբ պետք է ուշադիր լինել:

- **Անաֆիլաքսիա:** Անաֆիլաքսիան հազվադեպ, սակայն լուրջ ավերակի հակազդեցություն է, որը կարող է դրսևորվել ցանկացած պատվաստումից հետո: Այն դրսևորվել է Միացյալ Նահանգներում COVID-19-ի դեմ պատվաստված մեկ միլիոն մարդկանցից մոտ 2-ից 5-ի մոտ: COVID-19-ի դեմ պատվաստվելուց հետո յուրաքանչյուր անձ կարճ ժամանակով գտնվում է հսկողության ներքո, որպեսզի անաֆիլաքսիայի դրսևորման դեպքում այն հնարավոր լինի անմիջապես բուժել: Իմացե՛ք ավելին CDC-ի կայքէջում [ինչ Անել, եթե COVID-19-ի դեմ Պատվաստվելուց Հետո Ձեզ Մոտ Դրսևորվել է Ալերգիկ Հակազդեցություն](#):
- **Թրոմբոցիտոպենիայի համախտանիշով Թրոմբոզ (TTS):** TTS-ն հազվադեպ, սակայն լուրջ վիճակ է, որը ներառում է արյան մակարդուկներ և թրոմբոցիտների ցածր քանակ: Այն արձանագրվել է J&J պատվաստանյութով պատվաստված մարդկանց մոտ: 50 տարեկանից ցածր կանայք հատկապես պետք է տեղեկացված լինեն այս հազվադեպ հիվանդությունը ձեռք բերելու՝ իրենց մեծացած վտանգի մասին: J&J պատվաստանյութով պատվաստված 18-ից 49 տարեկան 1 միլիոն կանանցից մոտավորապես 7-ի մոտ դրսևորվել է TTS: 50 տարեկան և ավելի բարձր տարիքի կանանց և բոլոր տարիքի տղամարդկանց համար TTS-ի վտանգը էլ ավելի հազվադեպ է: Ավելին իմանալու համար այցելե՛ք [CDC-ի J&J պատվաստանյութի վերաբերյալ հաճախակի տրվող հարցերի կայքէջ](#):
- **Գիլեն-Բարեի Համախտանիշ (GBS):** GBS-ն հազվադեպ խանգարում է, որի ժամանակ օրգանիզմի իմունային համակարգը վնասում է նյարդային մկանները: Սա առաջացնում է մկանային թուլություն, իսկ երբեմն՝ կաթված: Մարդկանց մեծամասնությունը ամբողջովին ապաքինվում է GBS-ից, բայց որոշ դեպքում այն մշտական վնասվածք է հասցնում նյարդերին: GBS-ն արձանագրվել է J&J պատվաստանյութով պատվաստված մարդկանց մոտ: Ավելի շատ դեպքեր արձանագրվել են տղամարդկանց շրջանում, հատկապես՝ 50 տարեկան և ավելի բարձր տարիքի: Գրեթե բոլոր մարդիկ հիվանդացել են պատվաստվելուց հետո 6 շաբաթվա ընթացքում: Մեծամասնությունը հիվանդացել է առաջին 3 շաբաթվա ընթացքում: Ընդհանուր առմամբ, ըստ գնահատման՝ J&J պատվաստանյութով պատվաստված յուրաքանչյուր մեկ միլիոն մարդկանցից 7,8-ը վարակվում է GBS-ով:





- Միոկարդիտ և պերիկարդիտ:** Սրտամկանի (միոկարդիտ) կամ սրտապարկի (պերիկարդիտ) բորբոքումներ նկատվել են այն մարդկանց մոտ, որոնք պատվաստվել են Pfizer (**COMIRNATY**) և Moderna պատվաստանյութերով: Դեպքերի մեծամասնությունը արձանագրվել է արական սեռի դեռահասների և երիտասարդների մոտ և մեծամասամբ դրսևորվել է պատվաստանյութի երկրորդ դեղաչափը ստանալուց օրեր անց: Բուժում ստացած մարդկանց մեծամասնության առողջական վիճակը բարելավվել է դեղորայքի և հանգստի միջոցով, և նրանց ինքնազգացողությունը արագ կերպով լավացել է: Նրանք, ում մոտ դրսևորվում են այդ խնդիրները, սովորաբար կարող են վերադառնալ իրենց առօրյա գործունեությանը ախտանիշների բարելավվելուց հետո:

Ընդհանուր առմամբ, գնահատվել է, որ Pfizer կամ Moderna պատվաստանյութի 2-րդ դեղաչափը ստացած մեկ միլիոն մարդկանցից 3.5-ի մոտ դրսևորվում է միոկարդիտ: Կարևոր է նշել, որ միոկարդիտը և պերիկարդիտը ավելի հաճախ հանդիպում են այն մարդկանց մոտ, որոնք վարակվում են COVID-19-ով, իսկ COVID-19-ի հետևանքով սրտի համար վտանգները կարող են ավելի ծանր լինել: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք CDC-ի [COVID-19-ի դեմ Պատվաստման Հետևանքով Առաջագոյ Միոկարդիտ և Պերիկարդիտ](#) կայքէջ:

Այս պահի դրությամբ Միացյալ Նահանգներում կատարվել է COVID-19-ի դեմ ավելի քան 350 միլիոն դեղաչափ պատվաստում: Չնայած, որ կարող են առաջանալ կողմնակի ազդեցություններ՝ դրանք շատ հազվադեպ են: Պատվաստման առավելությունները գերազանցում են ռիսկերը:

Արդյո՞ք կարող են COVID-19-ի դեմ պատվաստանյութերն ունենալ երկարատև կողմնակի ազդեցություններ

Ցանկացած պատվաստումը հաջորդող երկարատև կողմնակի ազդեցությունները չափազանց հազվադեպ են: Պատվաստումների ուսումնասիրությունները պատմականորեն ցույց են տալիս, որ եթե դրսևորվելու են կողմնակի ազդեցություններ, ապա դրանք հիմնականում սկսվում են պատվաստանյութի դեղաչափը ստանալուց հետո վեց շաբաթվա ընթացքում: Այդ պատճառով, Մենդամթերքի և Դեղամիջոցների Վարչությունը (FDA) պահանջել էր, որ COVID-19-ի դեմ օգտագործման թույլտվություն ունեցող յուրաքանչյուր պատվաստանյութ կլինիկական փորձարկումների շրջանում ուսումնասիրվի վերջին դեղաչափի ընդունումից հետո առնվազն ութ շաբաթ: Ինչպես նաև, CDC-ն շարունակում է ուշադիր հետևել COVID-19-ի դեմ պատվաստանյութերին՝ FDA-ի կողմից թույլտվություն ստանալուց և հաստատվելուց հետո: Այս տարբերակով մենք արագ իմացանք ցածր թրոմբոցիտներով հազվագյուտ արյան մակարդուկների մասին, որոնք դրսևորվեցին J&J պատվաստանյութով պատվաստված փոքրաթիվ կանանց մոտ (տե՛ս վերևում): Գիտնականների կողմից անվտանգության խնդրի և որևէ պատվաստանյութի միջև որևէ կապ հայտնաբերելու դեպքում FDA-ն և պատվաստանյութ արտադրողը համագործակցում են՝ լուծելու անվտանգության հետ կապված տվյալ խնդիրը (օրինակ՝ որոշակի խմբաքանակի հետ կապված խնդիր, արտադրական խնդիր կամ պատվաստանյութի հետ կապված խնդիր):

Եթե պատվաստվելուց հետո ինձ մոտ դրսևորվում է բացասական հետևանք (ինարավոր կողմնակի ազդեցություն), ինչպե՞ս պետք է հայտնեմ դրա մասին

Եթե պատվաստումից հետո ձեզ մոտ դրսևորվում է բացասական հետևանք (ինարավոր կողմնակի ազդեցություն), նույնիսկ եթե վստահ չեք, որ այն առաջացել է պատվաստման





հետևանքով, խնդրում ենք հաղորդել այդ մասին VAERS- ին: Պատվաստումների Բացասական Հետևանքների Մասին Հաղորդման Համակարգը (VAERS) վաղ նախագրուշացման համակարգ է, որը FDA- ն և CDC- ն օգտագործում են՝ անվտանգության հետ կապված հնարավոր խնդիրները հայտնաբերելու համար: Հաղորդելու համար զանգահարեք 1-800-822-7967 հեռախոսահամարով կամ այցելեք <https://vaers.hhs.gov/reportevent.html>:

Եթե դուք գրանցվել եք [V-Safe](#)-ում, CDC-ի՝ Պատվաստումից հետո առողջական վիճակը ստուգող համակարգում, կարող եք նաև հայտնել ձեր ախտանիշների մասին հեռախոսային (smart phone app) հավելվածի միջոցով:

Ոչ VAERS-ը, ոչ V-safe-ը չեն տրամադրում բժշկական խորհրդատվություն: Եթե ունեք ախտանիշներ կամ առողջական խնդիրներ, որոնք COVID-19-ի դեմ պատվաստվելուց հետո ցանկացած ժամանակ անհանգստացնում են ձեզ, կապ հաստատեք ձեզ առողջապահական ծառայություններ տրամադրողի հետ կամ դիմեք բուժօգնության:

Արդյո՞ք պատվաստման արդյունքում իմ COVID-19-ի թեստը դրական կլինի

Ոչ: Պատվաստանյութը պատճառ չի կարող լինել, որ PCR-ի կամ հակագենի վիրուսային թեստի (թթից կամ թթից նմուշ) դեպքում, որը փնտրում է COVID-19-ի ընթացիկ վարակ, թեստի արդյունքը դրական լինի: Հնարավոր է՝ դրական արդյունքներ ցույց տան հակամարմինների (արյան թեստ) որոշ թեստեր: Դա պայմանավորված է նրանով, որ պատվաստանյութերը գործում են՝ սովորեցնելով ձեր մարմինը ստեղծել հակամարմիններ:

Տե՛ս հանրային առողջապահության թեստավորման կայքէջը՝ ph.lacounty.gov/covidtests COVID-19-ի թեստերի մասին ավելին իմանալու համար:

ՈՎԵ՞Ր ԿԱՐՈՂ ԵՆ ՊԱՏՎԱՍՏՎԵԼ

Եթե արդեն վարակվել եմ COVID-19-ով, արդյո՞ք պետք է պատվաստվեմ

Այո: Դուք պետք է պատվաստվեք, նույնիսկ եթե արդեն վարակվել եք COVID-19-ով: Մենք դեռ չգիտենք, թե COVID-19-ով վարակվելուց հետո որքան ժամանակ եք դուք պաշտպանված: Պատվաստվելը կամրապնդի ձեր դիմադրողականությունը (immunity) COVID-19-ի, ներառյալ վիրուսի ավելի վարակիչ ենթատեսակների դեմ ավելի լավ և երկարատև պաշտպանության համար:

COVID-19-ով վարակվելուց հետո պատվաստվելն անվտանգ է, սակայն դուք պետք է սպասեք ձեր մեկուսացման շրջանի ավարտին: Դա պայմանավորված է նրանով, որ պատվաստման գնալիս դուք չվարակեք առողջապահության ոլորտի աշխատողներին և ուրիշներին: Եթե դուք ունեցել եք մոնոկլոնային հակամարմին կամ ստացել եք վերականգնողական բուժում, պետք է սպասեք 90 օր՝ նախքան COVID-19-ի դեմ պատվաստվելը:

Կարո՞ղ եմ երեխաները պատվաստվել COVID-19-ի դեմ

12 տարեկան և բարձր տարիքի երեխաները կարող են պատվաստվել Pfizer պատվաստանյութով: Պատվաստանյութերը ներկայումս ուսումնասիրվում են 12 տարեկանից փոքր երեխաների շրջանում, և պատվաստանյութը վերջիններիս համար կարող է հասանելի դառնալ ուշ աշնանը կամ ձմռանը:

Համաճարակը սկսվելու պահից ի վեր Միացյալ Նահանգներում ավելի քան 4 միլիոն երեխաների COVID-19-ի թեստի արդյունքը եղել է դրական: Չնայած COVID-19-ը երեխաների մոտ հաճախ





ընթանում է ավելի մեղմ, քան մեծահասակների մոտ, որոշ երեխաներ COVID-19-ի հետևանքով կարող են լրջորեն հիվանդանալ կամ ունենալ առողջության հետ կապված երկարատև խնդիրներ: Ձեր երեխային պատվաստելը նվազեցնում է COVID-19-ի հարուցիչ վիրուսով վարակվելու հավանականությունը: Պատվաստանյութը նաև կաշտպանի երեխաներին Բազմահամակարգային Բորբոքային Համախտանիշից (MIS-C)¹ հազվադեպ հանդիպող, բայց լուրջ խնդիր երիտասարդ տարիքի անձանց մոտ, ովքեր վարակվել են COVID-19-ով:

Վարակված երեխաները կարող են վիրուսը փոխանցել ուրիշներին, նույնիսկ եթե հիվանդ չեն: Պատվաստվելն օգնում է պաշտպանել ընկերներին և ընտանիքներին, ինչպես նաև համայնքի ավելի մեծ զանգվածին: Դա ներառում է թույլ իմունային համակարգ ունեցող մարդկանց և մինչև 12 տարեկան երեխաների պաշտպանությունը, որոնք դեռ չեն կարող պատվաստվել:

Ամբողջովին պատվաստվելուց հետո ձեր երեխան իր ընկերներին այցելելու, սպորտային խաղեր խաղալու, ընտանիքին տեսնելու նպատակով ճամփորդելու և դպրոց վերադառնալու դեպքում ավելի քիչ է հավանական, որ կվարակվի: Նրանից չի պահանջվի կարանտին պահպանել, եթե իր ընկերը, ընտանիքի անդամը, ուսուցիչը կամ թիմակիցը վարակվի COVID-19-ով:

Լրացուցիչ տեղեկությունների համար [VaccinateLACounty.com](https://www.vaccinatelacounty.com) կայքէջում տե՛ս [COVID-19-ի ՀՏՀ-ները](#) [Ծնողների համար](#):

Կարո՞ղ եմ թույլ իմունային համակարգ ունեցող մարդիկ պատվաստվել COVID-19-ի դեմ

Այո: Թույլ իմունային համակարգ ունեցող (իմունային անբավարարություն) մարդկանց խստորեն խորհուրդ է տրվում պատվաստվել, քանի որ նրանք գտնվում են COVID-19-ով վարակվելու ավելի բարձր վտանգի ներքո: Ինչպես նաև վարակվելու դեպքում ավելի մեծ է հավանականությունը, որ նրանք ծանր կհիվանդանան: Սա հատկապես կարևոր է այժմ, երբ Դելտա ենթատեսակն այսքան տարածված է, քանի որ այն ավելի վարակիչ է, քան վիրուսի նախորդ ենթատեսակները:

Պատվաստանյութերը կարող են արդյունավետորեն չգործել այն մարդկանց համար, որոնք ունեն որոշակի առողջական խնդիրներ կամ ընդունում են այնպիսի դեղամիջոցներ, որոնք թուլացնում են իրենց իմունային համակարգը¹ (օրինակ՝ արյան քաղցկեղ կամ քաղցկեղի համար որոշակի բուժումներ, օրգանների փոխպատվաստում և որոշ աուտոիմուն հիվանդություններ):

Եթե դուք ունեք միջին կարգի կամ խստորեն թուլացած իմունային համակարգ և արդեն ստացել են COVID-19-ի դեմ Pfizer կամ Moderna պատվաստանյութերի 2 դեղաչափերը, խորհուրդ է տրվում

¹ Առողջական խնդիրներ ունեցող անձինք կամ այն անձինք, որոնք ընդունում են իրենց իմունային համակարգը թուլացնող դեղորայք, հնարավոր է՝ չստանան ամբողջական պաշտպանություն պատվաստանյութից: Սա ներառում է անձանց, որոնք/որոնց՝

- Ստանում են ակտիվ քիմիաթերապիա ուռուցքների կամ արյան քաղցկեղի դեմ
- Օրգանները փոխպատվաստել են և ընդունում են իմունային համակարգը ճնշող դեղորայք
- Նախորդ 2 տարիների ընթացքում ցողունային բջիջները փոխպատվաստել են կամ ընդունում են իմունային համակարգը ճնշող դեղորայք
- Ունեն միջին մակարդակի կամ ծանր առաջնային իմունային անբավարարություն (ինչպիսիք են Դիջորջի կամ Վիսկոտ-Օլդրիջի համախտանիշները)
- Ունեն բարդացած կամ չբուժված ՄԻԱՎ վարակ
- Ակտիվ բուժում են ստանում բարձր չափաբաժնով կորտիկոստերոիդներով կամ այլ դեղամիջոցներով, որոնք կարող են ճնշել իմունային համակարգի արձագանքը:

Խոստեք ձեր բժշկի հետ, եթե ունեք այս կամ նմանատիպ այլ առողջական խնդիր: Լրացուցիչ տեղեկությունների, ներառյալ պատվաստանյութերի առաջարկվող լրացուցիչ դեղաչափերի համար, այցելեք CDC-ի կայքէջ՝ [COVID-19-ի Դեմ Պատվաստանյութերը Միջին Մակարդակի Կամ Նիստ Իմունային Անբավարարություն Ունեցող Անձանց Համար](#):





պատվաստվել 3-րդ դեղաչափով: Խոսք է ընդհանուր հետ COVID-19-ի դեմ լրացուցիչ պատվաստանյութի դեղաչափը ստանալու և պատվաստվելու լավագույն ժամանակի մասին: mRNA պատվաստանյութի 3-րդ դեղաչափով պետք է պատվաստվեք ձեր 2-րդ դեղաչափը ստանալուց առնվազն 28 օր հետո: Հնարավորության դեպքում պետք է պատվաստվեք միևնույն պատվաստանյութով: Օրինակ՝ եթե դուք պատվաստվել եք Pfizer պատվաստանյութով, փորձեք որ ձեր 3-րդ դեղաչափը նույնպես լինի Pfizer պատվաստանյութ: Տվյալ պահին ևս մեկ դեղաչափ խորհուրդ չի տրվում նրանց, ովքեր պատվաստվել են J&J պատվաստանյութով: FDA-ն դեռ գնահատում է տվյալները՝ պարզելու, թե որքան լավ է այն ացուցում թույլ իմունային համակարգ ունեցող մարդկանց վրա:

Եթե ունեք թույլ իմունային համակարգ, շատ կարևոր է շարունակել պաշտպանել ինքներդ ձեզ՝ անգամ պատվաստանյութի 3-րդ դեղաչափը ստանալուց հետո: Սա ներառում է լավ ծածկող դիմակ կրելը, ֆիզիկական հեռավորություն պահպանելը, մարդաշատ կամ վատ օդափոխվող վայրերից խուսափելը և ձեռքերը հաճախ լվանալը: Դիտարկեք «[Կրկնակի դիմակ](#)» (վիրաբուժական դիմակի վրայից կտորե դիմակ կրել) կամ N95 շնչառական սարք կրելը՝ ավելի բարձր մակարդակի պաշտպանության համար: Ձեզ հետ սերտ շփում ունեցող մարդիկ նույնպես պատվաստվելով կարող են օգնել պաշտպանել ձեզ:

Կարո՞ղ եմ ավերգիա ունեցող մարդիկ պատվաստվել COVID-19-ի դեմ

Կախված է տարբեր հանգամանքներից.

- Մարդիկ, որոնք ավերգիա ունեն բերանով ընդունվող դեղամիջոցներից, սննդից (ներառյալ ձվերը), լատեքսից, ընտանի կենդանիներից կամ ծաղկափոշուց կամ այն մարդիկ, որոնք ունեն ընտանեկան ավերգիայի պատմություն, կարող են պատվաստվել:
- Եթե դուք ունեցել եք ավերգիկ հակազդեցություն պատվաստանյութից կամ ներարկումից, խորհրդակցեք ձեր բժշկի հետ՝ որոշելու, թե արդյոք անվտանգ է պատվաստվելը:
- Եթե ավերգիա ունեք Պոլիէթիլենային Գլիկոլից (PEG), ապա չպետք է պատվաստվեք Pfizer (COMIRNATY) կամ Moderna պատվաստանյութերով: Հարցրեք ձեր բժշկին՝ արդյոք կարող եք պատվաստվել J&J պատվաստանյութով:
- Եթե ավերգիա ունեք պոլիսորբատից, ապա չպետք է պատվաստվեք J&J պատվաստանյութով: Հարցրեք ձեր բժշկին՝ արդյո՞ք կարող եք պատվաստվել Pfizer կամ Moderna պատվաստանյութերով:

Ցանկացած պատվաստանյութի դեպքում առկա է անաֆիլաքսիայի (ծանր ավերգիկ հակազդեցության տեսակ) փոքր վտանգ: Սա է պատճառը, որ COVID-19-ի դեմ պատվաստված բոլոր անձինք պատվաստումից հետո որոշ ժամանակում գտնվում են հսկողության ներքո:

Ավերգիկ հակազդեցությունների վերաբերյալ տեղեկությունները կարող են փոփոխվել: Ամենաթարմ ուղեցույցի համար ստուգեք CDC-ի [COVID-19-ի դեմ Պատվաստանյութերն Ավերգիա Ունեցող Անձանց համար](#) կայքէջը և խոսեք ձեր բժշկի հետ:

Արդյո՞ք COVID-19-ի դեմ պատվաստումը խորհուրդ է տրվում հղի անձանց

Այո: CDC-ն և հղիության ոլորտի մասնագետները, ներառյալ՝ Մանկաբարձների և Գինեկոլոգների Ամերիկյան Քոլեջը, Մոր և Պտղի Բուժմիությունը, ինչպես նաև Բուժակ-Մանկաբարձների Ամերիկյան Քոլեջը խորհուրդ են տալիս, որ հղի և կրծքով կերակրող անձինք պատվաստվեն COVID-19-ի դեմ:





Չկա ապացույց, որ COVID-19-ի դեմ պատվաստումը առաջացնում է հղիության հետ կապված որևէ խնդիր, ներառյալ ընկերքի զարգացումը: 2021 թվականի հուլիսի դրությամբ պատվաստվել է ավելի քան 139,000 հղի անձ, և հղիության կամ պտղի հետ կապված անսպասելի խնդիրներ չեն առաջացել: Վիժման, աճի հետ կապված խնդիրների կամ բնածին արատների վտանգների ավելացման մասին որևէ հաղորդում չի եղել:

COVID-19-ը ինքնին լուրջ մտահոգություն է հղիության ընթացքում: COVID-19-ով վարակվող հղի կամ վերջերս հղի եղած անձինք ավելի մեծ հավանականությամբ ծանր կիիվանդանան և կիոսպիտալացվեն, քան ոչ հղիները: Նրանց մոտ ավելի մեծ հավանականությամբ կդրսևորվեն հղիության հետ կապված բարդություններ, ինչպես օրինակ՝ վաղաժամ ծննդաբերությունը, քան նրանց մոտ, որոնք վարակված չեն COVID-19-ով:

COVID-19-ի դեմ պատվաստումը կարող է հղիներին պաշտպանել COVID-19-ի հետևանքով ծանր հիվանդանալուց: COVID-19-ի դեմ mRNA պատվաստանյութերով պատվաստված մարդկանց ուսումնասիրությունների ընթացքում հայտնաբերվել են հակամարմիններ նորածինների պորտալարի արյան և կրծքի կաթի մեջ: Սա նշանակում է, որ հղիության ընթացքում պատվաստումը կարող է նաև օգնել պաշտպանել երեխաներին COVID-19-ից:

Հղիության ընթացքում COVID-19-ի դեմ պատվաստման անվտանգության և արդյունավետության մասին ավելացող ապացույցները ցույց են տալիս, որ COVID-19-ի դեմ պատվաստման առավելությունները գերակշռում են բոլոր հայտնի կամ հնարավոր վտանգները: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս Մոր և Պտղի Բուժմիության Ուղեցույցը՝ [COVID-19-ի դեմ Պատվաստումը, Եթե Հղի Եք Կամ Կրծքով Կերակրում Եք](#), ինչպես նաև CDC-ի կայքէջը՝ [COVID-19-ի դեմ Պատվաստումները Հղիության Կամ Կրծքով Կերակրման Ժամանակ](#):

Եթե հղի եք և ունեք պատվաստման հետ կապված հարցեր, խոսեք ձեր բժշկի հետ: Կարող եք գրուցել նաև MotherToBaby-ի մասնագետների հետ, որոնք հասանելի են՝ պատասխանելու հարցերին անգլերենով կամ իսպաներենով: Այս ծառայությունը անվճար է և գաղտնի և հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ առավոտյան 8-ից երեկոյան 5-ը: Կարող եք զանգահարել 866-626-6847 հեռախոսահամարով, հաղորդագրություն գրել 855.999.8525 համարին, էլ. հաղորդագրություն ուղարկել ContactUs@mothertobaby.org-ին կամ սկսել զրույց (chat) այստեղ՝ mothertobaby.org/ask-an-expert/:

Կարո՞ղ եմ կրծքով կերակրող անձինք պատվաստվել

Այո: Մասնագետները, ներառյալ՝ CDC-ն, Մանկաբարձների և Գինեկոլոգների Ամերիկյան Քոլեջը, Մոր և Պտղի Բուժմիությունը, ինչպես նաև Բուժակ-Մանկաբարձների Ամերիկյան Քոլեջը խորհուրդ են տալիս, որ կրծքով կերակրող անձինք պատվաստվեն COVID-19-ի դեմ:

Կրծքով կերակրող անձինք ներգրավված չեն եղել պատվաստանյութերի ուսումնասիրություններում: Այնուամենայնիվ, հիմնվելով այն բանի վրա, թե ինչ գիտենք տվյալ պատվաստանյութերի գործունեության մասին, պատվաստումը վտանգ չի ներկայացնում երեխայի համար: Վերջին տվյալները ցույց են տվել, որ կրծքով կերակրող անձինք, որոնք COVID-19-ի դեմ պատվաստվել են Pfizer (**COMIRNATY**) կամ Moderna պատվաստանյութերով, կրծքի կաթում ունեցել են հակամարմիններ, որոնք կարող են օգնել պաշտպանել նրանց երեխաներին: Այս պատվաստանյութերը չեն ներթափանցում կրծքի կաթի մեջ:





Կարո՞ղ եմ պատվաստվել COVID-19-ի դեմ ուրիշ պատվաստանյութեր ընդունելու հետ միաժամանակ

Այո: Մեծահասակները և 12 տարեկան և բարձր տարիքի երեխաները կարող են պատվաստվել COVID-19-ի դեմ այլ պատվաստանյութերին զուգահեռ, ինչպես օրինակ՝ կարմրուկի և կապույտ հազի: Եթե ձեր երեխան պատվաստվում է COVID-19-ով այնպիսի վայրում, որը չի առաջարկում իրենց անհրաժեշտ մյուս պատվաստանյութերը, ապա ցանկացած պահի դուք կարող եք գնալ մեկ ուրիշ վայր՝ այդ պատվաստանյութերով պատվաստվելու համար: Պատվաստումների միջակայքում սպասել անհրաժեշտ չէ:

Կարո՞ղ եմ անցնել սովորական բժշկական ընթացակարգ կամ հետազոտություն, եթե վերջերս պատվաստվել եմ COVID-19-ի դեմ

Սովորական բժշկական ընթացակարգերի կամ հետազոտությունների մեծ մասը կարող են իրականացվել COVID-19-ով պատվաստվելուց առաջ կամ հետո:

Ծանոթություն: Եթե հերթական մամոգրաֆիկ հետազոտություն կատարելու ժամանակն է, և դուք վերջերս պատվաստվել եք COVID-19-ի դեմ, հարցրեք ձեր բժշկին, թե որքա՞ն ժամանակ պետք է սպասեք նախքան մամոգրաֆիա անելը: COVID-19-ի դեմ պատվաստված մարդկանց մոտ կարող է առաջանալ ավշային հանգույցների այտուց (որը կոչվում է լիմֆադենոպաթիա) թևատակի շրջանում, որտեղ կատարվել է ներարկումը: Այդ այտուցը բնական նշան է, որ մարմինը ստեղծում է պաշտպանություն COVID-19-ի դեմ: Այդ ժամանակավոր այտուցը կարող է կեղծ ցուցանիշներ պատկերել մամոգրաֆիկ հետազոտության արդյունքի վրա, հետևաբար կարևոր է անձնակազմին ասել ձեր պատվաստման մասին: Լրացուցիչ մանրամասների համար տե՛ս Կրծքավանդակի Պատկերման Ընկերության [խորհուրդներ COVID-19-ի դեմ Պատվաստվող Կանանց Համար](#):

COVID-19-ի դեմ պատվաստումը կարող է նաև ազդել տուբերկուլյոզի (TB) որոշ տեսակի թեստերի արդյունքների վրա. տե՛ս CDC-ի [COVID-19-ի Պատվաստում և Այլ Բժշկական Ընթացակարգեր](#):

ՊԱՇՏՊԱՆԵԼՈՎ ԻՆՁ ԵՎ ՈՒՐԻՇՆԵՐԻՆ

Ի՞նչ անեմ, եթե պատվաստվելուց հետո ինձ մոտ դրսևորվեն COVID-19-ի ախտանիշներ

Պատվաստման արդյունքում ի հայտ եկող կողմնակի ազդեցություններից որոշները նման են COVID-19-ի ախտանիշներին: Դուք պետք է թեստ հանձնեք և մնաք տանը՝ հեռու ուրիշներից, եթե դուք ունեք՝

- Հազ, շնչարգելություն, քթահոսություն, կոկորդի ցավ կամ համի/հոտի նոր առաջացած կորուստ. այս ախտանիշները ՉԵՆ հանդիսանում պատվաստման կողմնակի ազդեցություններ:
- Պատվաստման կողմնակի ազդեցություններ (տե՛ս վերևում), որոնք պատվաստվելուց հետո տևում են ավելի քան 2 օր:

Դեռ կարևոր է հետևել COVID-19-ի ախտանիշներին, նույնիսկ եթե պատվաստված եք:





Ինչու՞ է մեզ անհրաժեշտ պատվաստումը, եթե կարող ենք կատարել այլ գործողություններ, ինչպիսիք են սոցիալական հեռավորություն պահպանելը և դիմակ կրելը:

Պատվաստումն այս համաճարակը դադարեցնելու լավագույն տարբերակն է: Պատվաստանյութերը ուժեղացնում են ձեր իմունային համակարգը, այդպիսով, վարակի հետ շփվելու դեպքում այն պատրաստ կլինի պայքարել վիրուսի դեմ: Այլ քայլերը, ինչպես օրինակ՝ դիմակ կրելը և ֆիզիկական հեռավորություն պահպանելը, օգնում են նվազեցնել վարակվելու կամ վարակը տարածելու հավանականությունը: Պատվաստումը հատկապես կարևոր է ընտանիքում վարակի տարածումը կանխելու համար, որտեղ կարող է դժվար լինել առանձնանալը, եթե ընտանիքի մեկ կամ մի քանի անդամներ վարակվեն COVID-19-ով կամ անհրաժեշտ լինի կարանտին պահպանել: Պատվաստումը նաև լավագույն տարբերակն է՝ կանգնեցնելու վիրուսի նոր ենթատեսակների զարգացումը և տարածումը:

Եթե ես պատվաստված եմ և շփվել եմ COVID-19-ով վարակված անձի հետ, արդյո՞ք պետք է կարանտին պահպանեմ

Եթե դուք չունեք ախտանիշներ և ամբողջովին պատվաստված եք, ձեզնից չի պահանջվում կարանտին պահպանել: Դուք պետք է թեստ հանձնեք, 14 օր շարունակեք հետևել ձեր առողջական վիճակին COVID-19-ի ախտանիշների համար և շարունակեք պաշտպանել ինքներդ ձեզ և ուրիշներին: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս Հանրային Առողջապահության Վարչության (DPH) [Երբ Դուք Ամբողջովին Պատվաստվել Եք](#) կայքէջը:

